ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«09» մայիսի 2019 թվականի № 76-Ա

«ԿԱՐԻՆ-ԳԵՈ» ՓԲԸ-Ի ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից քննված «ԿԱՐԻՆ-ԳԵՈ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ 2019 թվականի փետրվարի 23-ի թիվ 41-Ա հրամանով հարուցված վարչական վարույթի արդյունքները.

Պարզվեց, որ Ընկերությանը 2018 թվականի հունիսի 13-ի թիվ 01/29.4/3018-18 գրությամբ տրվել է զգուշացում թույլ տրված խախտումները վերացնելու վերաբերյալ: Զգուշացման մեջ առկա տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունն ունի ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված ապառքներ՝ 05.06.2018թ-ի դրությամբ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի մասով՝ 1 870.0 (մեկ միլիոն ութ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամի չափով և պետական տուրքի մասով 230.2 հազար (երկու հարյուր երեսուն հազար երկու հարյուր) ՀՀ դրամի չափով:

Վարույթն իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից արձանագրվել է այն փաստը, որ լիազոր մարմնի սահմանած ժամկետում (90 օր) ընդերքօգտագործման իրավունք կրողը չի վերացրել զգուշացման հիմքերը և ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 7-րդ կետերի և 61-րդ հոդվածով նախատեսված դրույթները, օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-454 պայմանագրի 3.4 կետի 3.4.1, 3.4.7 և 3.4.26 ենթակետերով նախատեսված պայմանները, որը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն հանդիսանում է ընդերքօգտագործման իրավունքի պայմանները ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ ընդերքօգտագործողին զգուշացում տալու հիմք:

Ընկերությունը զգուշացման վերաբերյալ ծանուցումը ստացել է 2018 թվականի հունիսի 19-ին, սակայն զգուշացման հիմքերը վերացված լինելու փաստը հավաստող որևէ փաստաթուղթ նախարարության կողմից չի ստացվել:

Ելնելով վերը շարադրվածից, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 3-րդ մասով, 35-րդհոդվածով՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2019 թվականի փետրվարի 23-ի թիվ 41-Ա հրամանով Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ: Նախարարությունը պահպանելով

օրենսդրությամբ սահմանված պահանջները՝ իրազեկել է Ընկերությանը վարչական վարույթի հարուցման և վարչական լսումների վերաբերյալ: Սույն վարչական վարույթը երկու անգամ երկարաձգվել է հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով և 6-րդ մասով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «ԿԱՐԻՆ-ԳԵՈ» ՓԲ ընկերության ՀՀ Շիրակի մարզի Ջաջուռի գորշ ածխի հանքավայրի ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնել:

2. 2013 թվականի փետրվարի 15-ի օգտակար հանածոների արդյունահանման թիվ ՇԱԹՎ-29/454 (նախկին 14/170) թույլտվությունը, լեռնահատկացման թիվ ԼՎ-454 ակտն ուժը կորցրած ճանաչել և լուծել օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-454 պայմանագիրը:

3. Ընդերքի գործակալության պետին՝

1) եռօրյա ժամկետում ծանուցել ընկերությանը ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու մասին.

2) ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3) սահմանված կարգով ծանուցել նաև համապատասխան պետական մարմիններին:

4 «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումն ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով և այն կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

6. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Հակոբ Վարդանյանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ**

4/9/2019

X

VERIFIED OCSP 09-Apr-19 18:29:57 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118